ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/07

գ. Լոռի Բերդ ,30 հուլիսի 2021 թ.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հ.Պողոսյանե ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովիկ Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2021թ նոյեմբերի 30-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 50 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8.500.000 (ութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 1.416.670 (մեկ միլիոն չորս հարյուր տասնվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ

հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[32]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Լոռի Բերդի համայնքապետարան	**„Հ. Պողոսյան,, ՍՊԸ**
Լոռու մարզ,գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի7	**ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35**
ՀՎՀՀ 06954163	**ՀՎՀՀ՝ 06938057**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**,Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ**
ՀՀ 900252000105	**Հ/Հ՝ 22005333506700 0**
Ա. Ներսիսյան	**Հ.Պողոսյան**
Կ.Տ	/Ստորագրություն/ Կ.Տ

[32] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով իրականացվում է:

Հավելված թիվ 1
«3» [illegible] 20__թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/07 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափ-ման միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ. դր.
1	2	3	4	5	6
	Ագարակ				
1	Գոյություն ունեցող բետոնե ճաղերի ապամոնտաժում, այնուհետև փոխարինում ջարդված ճաղերով	100մ	0,3	191,11	57,33
2	Բետոնե գլխակալների կառուցում Վ - 12.5 բետոնից	մ³	0,3	90,46	27,14
3	Բետոնե գլխակալների համար ցանց Br 100*100*5մմ	մ²	3	2,61	7,83
4	Ցանկապատի վերին գոտու կառուցում Վ - 12.5 բետոնից	մ³	2,9	70,98	205,84
5	Բետոնե գլխակալների համար ցանց Br 100*100*5մմ	մ²	17,2	2,61	44,89
6	Պատերի կառուցում կանոնավոր ձևի տուֆ քարով b = 200մմ	մ³	1,44	29,21	42,06
7	Պատի ամրանավորում ցանցով (առանց նյութի արժեքի)	տն	0,0062	75,35	0,47

8	Ցանց Br 100*100*5մմ	մմ	2,2	2,61	5,74
9	Խարիսխների տեղադրում պատերին, (ամրան A500c 12մմ)	տն	0,0032	680,39	2,18
10	Հիմքի համար 3-րդ գրունտի քանդում մեխանիզմով	1000մա	0,0015	586,84	0,88
11	Հիմքի համար 3-րդ գրունտի քանդում ձեռքով	մա	0,15	2,80	0,42
12	Բնահողի տոփանում խճով	100մմ	0,02	39,99	0,80
13	Բետոնե նախաշերտի կառուցում 100մմ հաստ.	մա	0,2	44,09	8,82
14	Բնահողի հետլիցք ձեռքով՝ տոփանումով	մա	0,45	1,43	0,64
15	Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափին էքսկավատորով	1000մա	0,0012	715,46	0,86
16	Տեղափոխում 3կմ	տն	2	1,28	2,68
17	Պատի հիմքի կառուցում Վ - 7.5 խամքարաբետոնից	մա	1,2	42,42	50,90
18	Պատերի վրա "Ռաբիցա" տիպի ցանցի ձգում	100մմ	0,145	104,63	15,17
19	Ցանցապատ հատվածների սվաղում ց/ավազե շաղախով (լավորակ)	100մմ	0,145	314,68	45,63
20	Ընդհանուր ցանկապատի ներկում ճակատային ներկով	100մմ	3,21	99,29	318,74
21	Երկու մետաղական դարպասների հին ներկի մաքրում և յուղաներկում (2 անգամ)	100մմ	0,185	240,03	44,41
22	Համայքային կենտրոնի բակում և դպրոցի բակում ,ԱԳԱՐԱԿԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Բովաձոր				
1	Գոյություն ունեցող ցանկապատի վերանորոգում	100մ	0,17	115,97	19,71
2	Պողպատաթերթ 30*15*650մմ	տն	0,0078	770,68	6,01
3	Մետաղական ցանկապատի յուղաներկում (2 անգամ)	100մմ	1,25	128,31	160,39
4	Դպրոցի բակում ,ԲՈՎԱՁՈՐԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Լոռի Բերդ				
1	Ցանկապատի վրա "Ռաբիցա" տիպի ցանցի ձգում	100մմ	0,33	104,63	34,53
2	Ցանցապատի սվաղում ց/ավազե շաղախով ռաբիցա ցանցի վրա	100մմ	0,33	314,68	103,84
3	Ցանկապատի ներկում ճակատային ներկով	100մմ	0,372	99,29	36,94

4	Մետաղական դարպասի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	0,135	128,31	17,32
5	Դպրոցի բակում ,ԼՈՌԻ ԲԵՐԴԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Մետաղական ճաղաշար				
6	Մետաղական ցանկապատի կառուցում և մոնտաժում (առանց նյութի արժեքի)	մ	24,8	1,75	43,29
7	Քառակուսի խողովակ 40*40*2մմ	մ	7,0	1,39	9,72
8	Ուղղանկյուն խողովակ 30*20*2մմ	մ	49,6	0,86	42,48
9	Ուղղանկյուն խողովակ 20*10*1մմ	մ	62,4	0,49	30,55
10	Մետաղական թերթ -150*8մմ	տն	0,0199	770,68	15,34
11	Ամրան A - 500c 12մմ	տն	0,0101	621,72	6,28
12	Պլաստմասսե խցան	հատ	14	0,03	0,44
13	Մետաղական ճաղաշարի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	0,102	128,31	13,09
	Յաղդան				
1	Մետաղական ցանկապատի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	1,709	128,31	219,29
2	Համայնքային կենտրոնի բակում և դպրոցի բակում ,ՅԱՂԴԱՆԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Ուռուտ				
1	Գոյություն ունեցող ցանկապատի վերանորոգում	100մ	0,216	115,97	25,05
2	,Ռաբիցաե տիպի ցանց 50*50*2մմ	ՄԱ	27,0	1,18	31,81
3	Մետաղական անկյունակ 50*50*3մմ	մ	14	1,57	21,93
4	Մետաղական ցանկապատի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	6,9	128,31	885,36
5	Մետաղական դարպասի և դռնակի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	0,4774	128,31	61,26
6	Համայնքային կենտրոնի բակում և դպրոցի բակում ,ՈՒՌՈՒՏԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Կողես				
1	Մետաղական ցանկապատի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	2,689	128,31	345,03
2	Մետաղական դարպասի և դռնակի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	0,139	128,31	17,84

3	Համայնքային կենտրոնի բակում և դպրոցի բակում ,ԿՈՂԵՍԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Լեջան				
1	Գոյություն ունեցող ցանկապատի քանդում H=1.5մ	մ	73,92	2,62	193,55
2	Համայնքային կենտրոնի բակում և դպրոցի բակում ,ԼԵՋԱՆԵ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Մետաղական ցանկապատ				
3	Մետաղական ցանկապատի կառուցում և մոնտաժում (առանց նյութի արժեքի)	մ	90,78	3,14	285,23
4	Բետոն Վ - 7.5	մա	1,7935	39,18	70,26
5	Քառակուսի խողովակ 40*40*2մմ	մ	17,3	1,39	24,07
6	Ուղղանկյուն խողովակ 30*20*2մմ	մ	87,0	0,86	74,54
7	Ուղղանկյուն խողովակ 20*10*1մմ	մ	208,1	0,49	101,88
8	Ամրան A - 500c 12մմ	տն	0,01285	621,72	7,99
9	Պլաստմասսե խցան	հատ	18	0,03	0,55
10	Մետաղական ցանկապատի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	0,51	128,31	65,44
	Մետաղական դռնակ				
11	Մետաղական դռնակի կառուցում և մոնտաժում (առանց նյութի արժեքի)	հատ	1	12,47	12,47
12	Բետոն Վ - 7.5	մա	0,11	39,18	4,31
13	Քառակուսի խողովակ 40*40*2մմ	մ	2,4	1,39	3,33
14	Ուղղանկյուն խողովակ 30*20*2մմ	մ	3,3	0,86	2,83
15	Ուղղանկյուն խողովակ 20*10*1մմ	մ	4	0,49	1,96
16	Պլաստմասսե խցան	հատ	2	0,03	0,06
17	Շերտապողպատ -50*3մմ	ՄԱ	0,037	18,23	0,67
18	Ծխնի	հատ	2	0,50	0,99
19	Բռնակ	հատ	1	1,17	1,17
20	Մետաղական դռնակի յուղաներկում (2 անգամ)	100ՄԱ	0,011	128,31	1,41
	Սվերդլով				

1	Հուշարձանի հարթակի երեսի բազալտե սալերի մասնակի քանդում	100մմ	0,232	54,59	12,67
2	Ց/ավազե հարթեցուցիչ շերտի քանդում	100մմ	0,232	45,45	10,54
3	Ց/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 30մմ հաստ.	100մմ	0,232	156,17	36,23
4	Հարթակի երեսպատում բազալտե սալերով H=30մմ	մմ	23,2	14,40	334,06
5	Աստիճանների ուղղահայաց երեսպատում բազալտե սալերով 30մմ	մմ	0,9	24,99	22,49
6	Հուշարձանի հարթակի երեսպատում բազալտե սալերով (առանց սալի արժեքի՝ օգտագործելով գոյություն ունեցողը)	մմ	19,3	6,56	126,53
7	Հուշարձանի հարթակի ճակատների երեսպատում բազալտե սալերով (առանց սալի արժեքի՝օգտագործելով գոյություն ունեցողը)	մմ	3,9	17,50	68,24
8	Դպրոցի բակում ,ՍՎԵՐԴԼՈՎ անվանական նստարանների պատրաստում և տեղադրում	հատ	2	155,43	310,86
	Մետաղական ցանկապատ				
9	Մետաղական ցանկապատի կառուցում և մոնտաժում (առանց նյութի արժեքի)	մ	7,6	3,14	23,88
10	Բետոն Վ - 7.5	մա	0,1465	39,18	5,74
11	Քառակուսի խողովակ 40*40*2մմ	մ	3,3	1,39	4,51
12	Ուղղանկյուն խողովակ 30*20*2մմ	մ	15	0,86	13,02
13	Ուղղանկյուն խողովակ 20*10*1մմ	մ	38	0,49	18,81
14	Ամրան A - 500c 12մմ	տն	0,0020	621,72	1,21
15	Պլաստմասսե խցան	հատ	3	0,03	0,08
16	Մետաղական ցանկապատի յուղաներկում (2 անգամ)	100մմ	0,04	128,31	5,59
	Մետաղական դռնակ (2 հատ)				
17	Մետաղական դռնակի կառուցում և մոնտաժում (առանց նյութի արժեքի)	հատ	1	12,47	12,47
18	Բետոն Վ - 7.5	մա	0,11	39,18	4,31
19	Քառակուսի խողովակ 40*40*2մմ	մ	2,4	1,39	3,33
20	Ուղղանկյուն խողովակ 30*20*2մմ	մ	3,3	0,86	2,83
21	Ուղղանկյուն խողովակ 20*10*1մմ	մ	4	0,49	1,96
22	Պլաստմասսե խցան	հատ	2	0,03	0,06
23	Շերտապողպատ -50*3մմ	մմ	0,037	18,23	0,67

24	Ծխնի	հատ	2	0,50	0,99
25	Բռնակ	հատ	1	1,17	1,17
26	Մետաղական դռնակի յուղաներկում (2 անգամ)	100մՔ	0,011	128,31	1,41

Ընդամենը **7083,33**

20% ԱԱՀ **1416,67**

Ընդամենը **8500,00**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Ագարակ, Բովաձոր, Լոռի Բերդ, Յաղդան, Ուռուտ, , Կողես, Լեջան, Սվերդլով գյուղերում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
Լոռու մարզ,գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի7
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900252000105

Ա. Լեռնիկյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Հ. Պողոսյան,, ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝ 06938057
,Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220053335067000

----------Հ.Պողոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
30 հոկտեմբեր 20 21թ. կնքված
ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/07 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
	Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի կենտրոնների բարեկարգում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.11.2021թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
Լոռու մարզ,գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի7
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900252000105

_____ Ա. Ներսիսյան
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Հ. Պողոսյան,, ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ 06938057
,Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ
Հ/Հ 22005333506700 0

---------- Հ.Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
30 հոկտ 2021թ. կնքված
***ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/07** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211212	Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի կենտրոնների բարեկարգում							2975000	5100000	5100000	5100000	5100000	5100000	5100000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով: "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ կկազմվի նոր ժամանակացույց ամբողջ գումարի չափով՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
Լոռու մարզ,գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի7
ՀՎՀՀ 06954163
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900252000105

Ա. Ներսիսյան
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Հ. Պողոսյան,, ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, հ. Գուգարք, 5/35
ՀՎՀՀ՝ 06938057
,Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 22005333506700 0

Հ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ